

ձեռագիրը ունի հետեւեալ յուշագրութիւնը. «Նուազտ պարտաւոր բանասիրի Աթանասի Մայրեցւոյ սկսեալ մատենիս սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ ընթերցեալ յանկ ածի ՌՃԽԶ (= 1697) ի թուին, յորժամ ես եւ իմ եղբայր Բարսեղ վարդապետ Ս. Երուսաղիմ եկաք»:

Էլ Պիրէհի հայկական եկեղեցին հոյակապ յիշատակարան մըն է քրիստոնէական ջերմեռանդ բարեպաշտութեան մեր պատուական նախնեաց՝ որ գիտցած են արժէքը Երուսաղէմին և կարողացած են ըսել Ոսկերերանի հետ. «մտածենք մեր Երուսաղէմ քաղաքին վրայ. մշտապէս յիշենք պայծառութիւնը անոր՝ որ յաւիտենական թագաւորին մայրաքաղաքն է» (Խէ. Սաղմոսի մեկնութեան)։



Ե

ԱՅՆՔԵԱՐԻՄ ԳԻՒՂԻ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Այնքեարիմը Ս. Գրոց մէջ.

Այնքեարիմը՝ Երուսաղէմէն, գէպի Արեւմուտք, վեցուկէս քիլոմետր հեռաւորութեամբ գիւղ մըն է, շրջապատուած լեռներով, այգիներով եւ ձիթաստաններով։ Ան՝ Յեսուայ գրքին, ըստ Եօթանասնից թարմանութեան, (ԺԵ. 60) Կարիւն քաղաքն է. Կարիւն կը նշանակէ այգի, և մին է Յուգայի տասնեմէկ քաղաքներէն, որ կը յիշուին նոյն գրքին մէջ. Կարիւն կը պակսի եբրայեցերէն բնագրին մէջ, ոմանք կը կարծեն թէ նոյն համարները բնագրէն ինկած են. իսկ Յերոնիմոս այդ գիւղին շատ մօտիկ ապրած ըլլալով հանդերձ, նոյն համարին պակսելուն մասին ենթադրական մեկնութիւններ կու տայ, որք ընդունելի չեն նկատուած։ Երեմիայի (Զ. 1) և Նէեմիի (Գ. 14) մէջ «Կարիմ»ը կը յիշատակուի Բեքսաբարիւն, որ կը նշանակէ տուն այգիի, իսկ